ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 50 ՏԱՐՈՒՄ

Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

1897 թ. Հայաստանում (ՀՍՍՀ ներկա տերիտորիայում) ապրում էր 797,9 հազար մարդ, 1913 թ.՝ մոտ մեկ միլիոն։ Երկրի բնակչությունը մեծ փոփոխությունների ենթարկվեց առաջին համաշխարհային պատերազմի և դաշնակների տիրապետության ժամանակ. այդ տարիներին Հայաստանի բնակչության թիվը պակասեց 46,2 հազար մարդով, բայց կատարվեց և հակառակը՝ Հայաստան եկան շուրջ 300 հազար հայ գաղթականներ։ Թվում էր, որ բնակչության նախապատերազմյան թիվը կվերականգնվի, սակայն վրա հասան սովն ու համաճարակը։ Միայն Երևանի նահանգում 1919 թ. բծավոր տիֆի 18,5 հազար դեպք է արձանագրվել[1]։ Ըստ հրապարակված տվյալների, 1918—1920 թթ. Հայաստանում մահացել է մոտ 430 հազար մարդ։ Այդ պատճառով էլ Հայաստանի բնակչության թիվը 1920 թ. իջավ 720 հազար մարդու։ Սակայն հայ ժողովուրդն ինչպես միշտ, այս անգամ ևս հաղթահարեց ծանր ու մռայլ օրերը. 1920 թ. նոյեմբերին ռուս ժողովրդի օգնությամբ նա տապալեց դաշնակների տիրապետությունը և հաստատեց սովետական կարգեր՝ հայ ժողովրդի գոյատևման և ազգային վերածննդի հուսալի երաշխիքը։

Նոր կարգերի հաղթանակն ապահովեց Հայաստանի տնտեսության զարգացումը, բարելավեց աշխատավորների կյանքի նյութական և կուլտուրական պայմանները, վերացրեց ազգամիջյան կռիվները։ Ժողովրդական տնտեսության վերականգնման և նրա սոցիալիստական վերակառուցման շնորհիվ հանրապետության բնակչության թիվը 1939 թ. հասավ 1282,3 հազար մարդու։ Նրա տարեկան միջին աճը կազմեց 3,3 տոկոս։

Ինչպես ողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ մեր հանրապետությունում բնակչության թիվը զգալիորեն նվազեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին, որը խլեց 20 միլիոն սովետական մարդկանց կյանք։ Սակայն չնայած մարդկային ծանր կորուստներին, Հայաստանի բնակչության թիվն այդ տարիներին գրեթե չփոխվեց[2]՝ երկրի արևմտյան շրջաններից բնակչության մի մասը Հայկական ՍՍՀ էվակուացնելու պատճառով։ Դրա հետևանքով Հայկական ՍՍՀ-ը 1947 թ. նախապատերազմյան մակարդակը գերազանցեց։ Այդ և հետագա տարիների բնակչության աճի գործում կարևոր դեր խաղաց սովետական բանակից մասսայական զորացրումը և 1946—1948 թթ. կազմակերպված հայրենադարձությունը։

Հանրապետության բնակչությունն արագորեն աճեց նաև հաջորդ տասնամյակներում. 1959 թ. համամիութենական մարդահամարի ժամանակ կազմեց 1763,1 հազար մարդ, իսկ վերջին մարդահամարի տվյալներով՝ 2493,4

---

[1] «Народное здравоохранение Арм. ССР за 20 лет», Ереван, 1940, էջ 12—13։

[2] Հայկական ՍՍՀ-ում 1940 թ. եղել է 1300 հազար բնակիչ, 1947 թ.՝ 1347,3 հազար բնակիչ։

հազար մարդ։ 1970 թ. հանրապետության բնակչության թիվը 1926 թ. մակարդակը գերազանցեց 2,8 անգամ։ Բնակչության թվաքանակի արագ փոփոխությունները պայմանավորված են բնական աճով, միգրացիայով և հայրենադարձությամբ։

Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրության ամբողջ պրոցեսը սերտորեն կապված է ժողովրդի նյութական կյանքի բարելավման, երկրում առողջապահության հիմնարկների ցանցի ընդլայնման, կենսամակարդակի անշեղ բարձրացման հետ։ Այդ ամենի շնորհիվ ապահովվում են բնական աճի կայուն տեմպերը։ 1965 թ. Հայկական ՍՍՀ բնակչության բնական աճը (1000 բնակչի հաշվով) ԱՄՆ-ից բարձր է եղել 2,3 անգամ, Իտալիայից՝ 2,5, Անգլիայից և Ֆրանսիայից՝ 3—3,5 անգամ, Ճապոնիայից՝ ավելի քան երկու անգամ[3]։ Նորածինների թվի մեծացումը և մահացության խիստ նվազումը հանրապետությունում հետևանք են ոչ միայն բնակչության կյանքի և աշխատանքի պայմանների արմատական բարելավման, այլև վտանգավոր հիվանդությունների իսպառ վերացման և բուժսպասարկման մակարդակի բարձրացման։ Եթե Հայաստանում 1913 թ. կար ընդամենը 73 բժիշկ (առանց զինվորական բժիշկների), ապա 1969 թ. նրանց թիվը հասավ 7329-ի։ Բնակչության ապահովվածությունը բժիշկներով (10 հազար բնակչի հաշվով) 1913 թ. եղել է 0,7, 1966 թ.՝ 28,1, 1968 թ.՝ 29,7 բժիշկ, մահճակալային ապահովվածությունը համապատասխանաբար՝ 2,1, 82,0 և 85,2[4]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը վճռական նշանակություն ունեցավ նաև սփյուռքահայության համար։ Ջնայած երկրի տնտեսական ծանր դրությանը, Սովետական Հայաստանը իր գոյության հենց առաջին տարիներին գրկաբաց ընդունեց Արևմտյան Հայաստանից գաղթած 125 հազար հայերի[5]։ Նախապատերազմյան տարիներին արտասահմանից Հայաստան են եկել ևս մոտ 75 հազար հայ տարագիրներ[6]։ Արտասահմանյան հայերի Հայաստան գալու նոր հոսանքը սկսվեց Հայրենական մեծ պատերազմի ավարտումից հետո։ 1946—1948 թթ. հայրենադարձների թիվը կազմեց ավելի քան 90 հազար մարդ։ Սփյուռքահայության կազմակերպված հայրենադարձության երրորդ փուլը սկսվեց 1962 թ. և շարունակվում է մինչև օրս։ Անցած ութ և կես տարում հայրենադարձվել են շուրջ 18,5 հազար հայեր։ Այսպիսով, վերջին կես դարում Հայաստան են եկել ավելի քան 183 հազար հայ պանդուխտներ, չհաշված 125.000 հայերի առաջին գաղթը։ Հայերի գանգվածային ներգաղթը շարունակվելու է նաև հետագայում։

Բնակչության դինամիկայի մեջ կարևոր դեր է կատարում նաև արտագնացությունը։ Ագրարային գերբնակչությամբ տառապող Երևանի նահանգը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին տարեկան տալիս էր

---

3 «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», Ереван, 1967, էջ 411—415։

4 «Народное хозяйство Армянской ССР в 1968 г. (Статистический ежегодник)», Ереван, 1969, էջ 220։

5 «Խորհրդային Հայաստան, 1920—1925, հինգ տարիներ», Երևան, 1926, էջ 69։

6 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը, 1920—1960», Երևան, 1960, էջ 365։

7 Գր. Հարությունյան, Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Կ XIV համագումարում ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, Երևան, 1948։

շուրջ 27 հազար արտադնաց, որից 2 հազար մարդ գնում էր արտասահման։ Արտագնացությունը մեծ էր հատկապես սակավահող լեռնային շրջաններում։

Սոցիալիզմը լիկվիդացրեց ագրարային գերբնակչության վտանգը, փոխեց միգրացիայի բնույթն ու ուղղությունը։ Սովետական Միության մեջ միգրացիան ամբողջապես տեղի է ունենում երկրի ներսում և կապված է զարգացող արդյունաբերությունը, շինարարությունը բանվորական ուժով ապահովելու, երկրի բնական ռեսուրսները ռացիոնալ օգտագործելու, վերաբնակվողների ու ամբողջ բնակչության բարեկեցության մակարդակը բարձրացնելու հետ։ Միգրացիոն պրոցեսների վրա, բացի արտադրությունից, էական ազդեցություն են ունենում նաև բնակչության վերարտադրության տեմպերը, տնտեսության ճյուղային կառուցվածքը, արտադրության տեխնիկական հագեցվածությունը, բնակչության նյութական և կուլտուրական կյանքի մակարդակը, բնական պայմանները։ Սակայն այդ գործոնների ազդեցության չափերը տարբեր են։ Եթե մինչև հեղափոխությունը Հայաստանի արտաքին միգրացիայի բալանսը բացասական էր, ապա սոցիալիստական կարգերում վիճակը արմատապես փոխվեց. հետզհետե մեծացավ դրսից Հայաստան եկած բնակիչների թիվը։ Դա հատկապես դրսևորվեց ժողովրդական տնտեսության վերակառուցման, արդյունաբերության բուռն զարգացման ժամանակաշրջանում։ Սովետական Միության մյուս հանրապետություններից անընդհատ Հայաստան էին դալիս մեծ թվով մասնագետներ ու որակյալ բանվորներ։ Օրինակ, 1930-ական թվականներին շահագործման հանձնված Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ գործարանը համարյա ամբողջապես համալրվեց Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության կենտրոններից եկած աշխատավորներով։ Հայաստանի միջհանրապետական միգրացիան ակտիվացավ հատկապես ետպատերազմյան տարիներին. տարեցտարի ավելացավ միութենական հանրապետություններից Հայաստան եկողների թիվը։ Միայն վերջին տասնմեկ տարում Հայաստանի բնակչության մեխանիկական աճը կազմել է 147 հազար մարդ։

1960—1968 թթ. ՀՍՍՀ բնակչության մեխանիկական աճի 43,6 տոկոսը կազմել են Ադրբեջանից և Վրաստանից, 8,7 տոկոսը՝ ՌՍՖՍՀ-ից եկածները, 2,5 տոկոսը եկել են միութենական մյուս հանրապետություններից, 37,4 տոկոսը՝ անհայտ վայրերից, 7,8 տոկոսը հայրենադարձներ են։ Ադրբեջանից, Վրաստանից և ՌՍՖՍՀ-ից Հայաստան եկածների հիմնական զանգվածը եղել են հայեր։

Վերջին 20 տարում Հայաստանի բնակչությունն ավելացել է 1146,2 հազար մարդով, այդ թվում 84,9 տոկոսը (974,0 հազար մարդ) լրացվել է բնական աճի միջոցով. 13,4 տոկոսը (153,7 հազար մարդ)՝ միութենական մյուս հանրապետություններից եկածների հաշվին, իսկ 1,7 տոկոսը (18,5 հազար մարդ) եղել են հայրենադարձներ։

Սովետական Հայաստանի բնակչության սեռային թվաքանակի փոփոխությունների մասին պատկերացում են տալիս մարդահամարների հետևյալ տվյալները.

	Տղամարդ (տոկոսներով)	Կին (տոկոսներով)
1897 թ.	53,5	46,5
1926 թ.	51,0	49,0
1939 թ.	50,6	49,4
1959 թ.	47,8	52,2

Ինչպես տեսնում ենք, սկսած XX դարից տղամարդկանց տեսակարար կշիռը հետզհետև նվազել է, իսկ կանանցը՝ բարձրացել։ Տարբերությունները մեծ են 1897—1926 և հատկապես 1939—1959 թթ., անցած պատերազմնե-րում տղամարդ բնակչության մեծ կորուստների պատճառով, ինչպես նաև 20 տարեկանից բարձր բնակչության մեջ տղամարդկանց բարձր մահացության հետևանքով։

Ինչ վերաբերում է բնակչության տարիքային կազմին, 1959 թ. հանրա-պետության բնակչության 37,7 տոկոսը կազմել են երեխաները և մինչև 16 տարեկան պատանիները, 53,7 տոկոսը՝ աշխատանքային հասակ ունեցող բնակիչները, 8,6 տոկոսը՝ կենսաթոշակի տարիքի հասած բնակիչները[8]։ Հե-տաքրքիր է, որ գնալով բարձրացել է կենսաթոշակառուների թիվը, 60 և ավե-լի բարձր տարիք ունեցողները 1939 թ. կազմում էին բնակչության 6,9 տոկո-սը, իսկ 1959 թ.՝ 8 տոկոսը։

Երեխաների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է գյուղական բնակչության մեջ։ 1959 թ. մինչև 9 տարեկան երեխաները կազմում էին ՀՍՍՀ գյուղական բնակչության 31,9 տոկոսը, իսկ քաղաքային բնակչության՝ 26,1 տոկոսը։ Նույն թվականին 20—34 տարեկան բնակչության տեսակարար կշի-ռը քաղաքում կազմում էր 31,2 տոկոս, իսկ գյուղական վայրերում՝ 27,0 տո-կոս[9]։ Դա պետք է բացատրել գյուղական երիտասարդության մի մասի քա-ղաքում սովորելու և աշխատելու հանգամանքով։

Խոր վերափոխություններ են կատարվել հանրապետության բնակչության սոցիալական կազմի մեջ։ Նախասովետական Հայաստանին բնորոշ էր տնտե-սության հետամնացությունը, արդյունաբերության թույլ զարգացումը։ Բնակ-չության 90 տոկոսը կազմում էր գյուղական բնակչությունը։ 1913 թ. Հայաս-տանի լեռնահանքային արդյունաբերության մեջ աշխատում էին 4400 բան-վոր, գինու-կոնյակի արտադրության մեջ՝ 290, կաշվի և մետաղամշակման արդյունաբերության մեջ՝ 252, էլեկտրակայաններում՝ 14, իսկ երկաթուղի-ներում և արհեստանոցներում՝ 1000 բանվոր։ Այսպիսով, խոշոր արդյունա-բերության մեջ աշխատողների ընդհանուր թիվը 1913 թ. կազմում էր մոտ 6000 մարդ, կամ ամբողջ բնակչության 0,6 տոկոսը, մինչդեռ Ռուսաստանում այն հասնում էր 2 տոկոսի։ Դա նույնպես Հայաստանի տնտեսության հետա-մնացության չափանիշն էր։

Բնակչության սոցիալական կազմը արմատական փոփոխությունների են-թարկվեց սովետական տարիներին՝ կապված ժողովրդական տնտեսության վերականգնման և վերակառուցման հետ։ 1928 թ. Հայաստանի բանվոր-ծա-ռայողների թիվը հասավ 50 հազարի, իսկ առաջին հնգամյակում՝ կրկնա-պատկվեց։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և ին-դուստրացման հաջողությունների շնորհիվ լրիվ լիկվիդացվեցին շահագործող դասակարգերի մնացորդները, վերացվեց դասակարգային անտագոնիզմը։ Ստորև բերվող աղյուսակի տվյալները ցույց են տալիս Սովետական Հայաս-տանի բնակչության սոցիալական կազմում կատարված կարևոր տեղաշար-ժերը (տոկոսներով)[10]։

---

8 «Итоги всесоюзной переписи населения 1959 г., Арм. ССР», М., 1963, էջ 16։

9 Նույն տեղում, էջ 16—17։

10 Տե՛ս «1926 թվականի համամիութենական մարդահամար, ՀՍԽՀ, բաժին II, գրաղմունք», Թիֆլիս, 1930, էջ 2։ «Итоги всесоюзной переписи населения 1959 г., Арм. ССР», էջ 28։

	1926	1939	1959
Ամբողջ բնակչությունը (աշխատողները և խնամքի տակ եղածները)	100	100	100
այդ թվում			
բանվորներ	13,2	17,6	39,9
ծառայողներ		14,6	22,4
կոլտնտեսականներ և կոոպերացված արհեստավորներ	0,1	65,3	37,5
մենատնտես գյուղացիներ և չկոոպերացված արհեստավորներ	79,1	3,7	0,2
քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրեր	7,6	—	—

Բերված թվերից երևում է, որ 1939—1959 թթ. ընթացքում բանվորների թիվը ավելի քան կրկնապատկվել է և, ընդհակառակը, մոտ 20 տոկոսով պակասել կոլտնտեսականների թիվը։ Դրա պատճառը կոլտնտեսությունների մի մասի պետական տնտեսությունների վերածվելն է։ Սակայն Հայաստանի բանվոր-ծառայողների աճի գլխավոր պատճառը ետպատերազմյան էկոնոմիկայի խոր տեղաշարժերն են՝ արդյունաբերության, հատկապես նրա առաջատար ճյուղերի (գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության, քիմիայի, թեթև և սննդի արդյունաբերության) արագ զարգացումը։ Եթե բանվոր-ծառայողների տարեկան միջին աճը 1950—1960 թթ. կազմում էր 19 հազար մարդ, ապա 1960—1968 թթ. այն հասավ 41,5 հազար մարդու։

Ազգային կազմի տեսակետից Հայաստանի բնակչությունը համեմատաբար միատարր է. հայերը կազմում են 87,9 տոկոս, ադրբեջանցիները՝ 6,1, ռուսները՝ 3,2 տոկոս, իսկ 2,8 տոկոսը կազմում են մյուս ազգությունները։ Անցյալում կատարված մարդահամարների տվյալներով, ՍՍՀՄ ներկա տերիտորիայում 1897 թ. ապրում էր 1173 հազար հայ, 1926 թ.՝ 1565,8 հազար, 1939 թ.՝ 2151,9 հազար, 1959 թ.՝ 2786,9 հազար, իսկ 1965 թ.՝ 3400 հազար հայ։ Հայաստանի բնակչության ազգային կազմի փոփոխությունների մասին գաղափար են տալիս ստորև բերվող թվերը (ըստ մարդահամարների տվյալների).

	1926		1939		1959	
	բնակչության թիվը	տոկոսը	բնակչության թիվը	տոկոսը	բնակչության թիվը	տոկոսը
հայեր	743571	84,4	1061997	82,8	1551610	87,9
ադրբեջանցիներ	76870	8,7	130896	10,2	107748	6,1
ռուսներ	19548	2,2	51464	4,0	56477	3,2
եզդիներ	12237	1,4	—	—	—	—
քրդեր	3025	0,3	20681	1,6	25627	1,5
հույներ	2980	0,3	4181	0,3	4976	0,3
ասորիներ	2215	0,3	3230	0,3	4326	0,3
ուկրաինացիներ	2826	0,3	5496	0,4	5593	0,3
բելոռուսներ	—	—	—	—	805	0,0
գարափափախներ	6311	0,7	—	—	—	—
թուրք օսմաններ	1516	0,2	—	—	—	—
պարսիկներ	5043	0,6	—	—	—	—
հրեաներ	—	—	—	—	1024	0,1
այլ ազգեր	5148	0,6	4593	0,4	4862	0,3
Ընդամենը	881290	100	1282338	100	1763048	100

Բնակչության կազմում հայերի տեսակարար կշռի բարձրացումը հետևվանք է նաև արտասահմանյան հայերի հայրենադարձության, իսկ ադրբեջանցիների տեսակարար կշռի իջեցումը՝ 1947—1948 թթ. Հայաստանից նրանց մի մասի Ադրբեջանական ՍՍՀ տեղափոխվելու, որը իրականացվեց երկու հանրապետությունների կառավարությունների համաձայնությամբ։

Սովետական տարիներին մեծ տեղաշարժեր են կատարվել բնակչության կրթական մակարդակի բարձրացման տեսակետից։ Նախասովետական Հայաստանը աչքի էր ընկնում բնակչության գրագիտության ցածր տոկոսով։ 1897 թ. Հայաստանի 9—49 տարեկան բնակչության միայն 9,2 տոկոսն էր գրագետ, ըստ որում գրագետ էր տղամարդկանց 14,5 տոկոսը, իսկ կանանց՝ 2,9 տոկոսը։ Գրագիտությունը առավել ցածր էր գյուղական վայրերում, ուր կազմում էր 5,7 տոկոս (տղամարդկանցը՝ 9,7, իսկ կանանցը՝ 1,1 տոկոս)։ 1914—1915 ուսումնական տարում Հայաստանի դպրոցներում սովորում էին ընդամենը 34,8 հազար երեխա, որոնցից 32,4 հազարը սովորում էին I—IV դասարաններում։ Մեկ միլիոն բնակչություն ունեցող երկրի համար կրթական նման վիճակը, իհարկե, ողորմելի էր։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը նոր դարաշրջանի սկիզբ հանդիսացավ հայ ժողովրդի ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև հոգևոր կյանքում, մշակույթի ասպարեզում։ Տնտեսության հզոր վերելքին ուղեկցեցին կուլտուրական նվաճումները, քանի որ նոր հասարակարգի կառուցումը բնականորեն պահանջում էր բազմակողմանիորեն զարգացած, իրենց մասնագիտական գիտելիքներին խոր տիրապետած և ընդհանուր բարձր կուլտուրա ունեցող մարդիկ։ Այդ կարևոր խնդիրները լուծեց մեր երկրում իրականացված կուլտուրական հեղափոխությունը, որի կարևորագույն նվաճումն էր սովետական ժողովրդի կրթական սիստեմի, կուլտուր-լուսավորական գործի բարելավումը։ Երկրում վերացվեց անգրագիտությունը, իրականացվեց պարտադիր ուսուցումը։ Ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացման փայլուն ապացույցը դպրոցական ցանցի ընդարձակումն է, սովորողների թվի աճը։ Եթե 1927—1928 ուսումնական տարում Սովետական Հայաստանում գործում էին 836 հանրակրթական դպրոցներ, որտեղ սովորում էր 86294 երեխա, 2 միջնակարգ մասնագիտական հաստատություն՝ 1676 սովորողով, և 2 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 1640 ուսանողով, ապա 1968—1969 ուսումնական տարում կար 1505 հանրակրթական դպրոց, 47 պրոֆ-տեխնիկական ուսումնարան և 59 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն, որտեղ համապատասխանաբար սովորում էին 612484, 16554 և 43064 մարդ։ Նույն ուսումնական տարում 12 բարձրագույն ուսումնական հաստատություններում ստացիոնար և հեռակա կարգով սովորում էին 51863 մարդ[11]։

Եթե 1913—1969 թթ. հանրապետության բնակչության թիվն աճել է մոտավորապես 2,5 անգամ, ապա սովորողների թիվը նույն ժամանակամիջոցում աճել է մոտավորապես 18 անգամ։

Ժողովրդական կրթության մակարդակի բարձրացման շնորհիվ սոցիալիստական շինարարության ընթացքում հանրապետությունում ձևավորվեց սովե-

[11] «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», էջ 318—319; «Народное хозяйство Армянской ССР в 1968 г.», էջ 109։

տահայ նոր մտավորականությունը։ 1968 թ. հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էին բարձրագույն կրթություն ունեցող 72104 մասնագետներ, այդ թվում՝ 18502 ինժեներ, 28876 մանկավարժ, 7167 ագրոնոմ, զոոտեխնիկ, անասնաբույժ, 5493 տնտեսագետ և ապրանքագետ։ Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների թիվը հասել էր 60339 մարդու[12]։ Ժողովրդական տնտեսության մեջ աշխատող մասնագետների մեջ բարձրացել է կանանց տեսակարար կշիռը. բարձրագույն կրթություն ունեցողների 42 տոկոսը, իսկ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների 52 տոկոսը կազմել են կանայք։ Լուսավորության և առողջապահության բնագավառի աշխատողների մեջ կանանց տեսակարար կշիռը անհամեմատ ավելի մեծ է. 1968 թ. բժիշկների 68 տոկոսը և բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների 53 տոկոսը կանայք էին։

Սովետական Հայաստանի կեսդարյա կարևոր նվաճումներից են նաև բնակչության կառուցվածքում տեղի ունեցած տեղաշարժերը, մասնավորապես քաղաքային բնակչության արտակարգ բարձր աճը։ Այդ միանգամայն օրինաչափ պրոցեսը պայմանավորված է ինդուստրացման արագ տեմպերով, գլխավորապես քաղաքներում կենտրոնանալու հակում ունեցող տնտեսության ճյուղերի, գիտության, մշակութային հիմնարկների զարգացումով։

1969 թ. հանրապետության ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը նախասովետական մակարդակը գերազանցել է 161,9 անգամ, այդ թվում արտադրության միջոցների արտադրությանը՝ («Ա» խումբ) 333,7 անգամ, սպառման միջոցների արտադրությանը՝ («Բ» խումբ) 72,1 անգամ[13], իսկ 1960—1969 թթ. ընթացքում արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը մեծացել է 237 տոկոսով[14]։ Հասկանալի է, որ արդյունաբերության, մասնավորապես ծանր ինդուստրիայի ճյուղերի (որոնք հիմնականում կենտրոնացվել են քաղաքներում և քաղաքատիպ ավաններում) զարգացման բարձր տեմպերը պետք է հանգեցնեն և քաղաքային բնակչության թվաքանակի մեծացմանը, ամբողջ բնակչության մեջ նրա տեսակարար կշռի բարձրացմանը։ Պակաս դեր չեն խաղացել նաև քաղաքաստեղծ մյուս գործոնները՝ շինարարության, տրանսպորտի, կապի զարգացումը, սպասարկու ոլորտի ընդարձակումը, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական հիմնարկների ստեղծումը, որոնք և արագացրել են ուրբանիզացիայի պրոցեսը, խթանել քաղաքային բնակչության աճը։ Քաղաքային բնակչության աճի բարձր տեմպերը հետևանք են նաև նոր քաղաքների, քաղաքատիպ ավանների ձևավորման, գյուղական բնակչության մի մասի քաղաք տեղափոխվելու և մշտական բնակություն հաստատելու, առանձին քաղաքների շրջագծի մեջ նոր գյուղեր վերցնելու, աշխարհով մեկ սփռված հայերի՝ սեփական օջախը վերադառնալու։ Եթե 1926—1970 թթ. հանրապետության բնակչությունը ավելացել է մոտավորապես 3 անգամ, ապա քաղաքային բնակչությունը աճել է 9, գյուղականը՝ 1,4 անգամ։ 1970 թ. մարդահամարի տվյալներով, ՀՍՍՀ բնակչության 59,4%-ը ապրում է քաղաքներում, 1913 թ. մակարդակը գերազանցելով մոտավորապես 15 անգամ։

---

12 «Народное хозяйство Армянской ССР в 1968 г.», էջ 148—151։
13 «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», էջ 72։
14 «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 50—51, 54։

Հայկական ՍՍՀ տնտեսական բոլոր շրջաններում անցած 10 տարում ավելացել են քաղաքային բնակավայրերը և նրանց բնակչությունը՝ արդյունաբերությունն արագ զարգանալու և նոր քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ ձևավորվելու հետևանքով։ Հատկապես զգալի է Արարատյան տնտեսական շրջանի քաղաքային բնակչության տեսակարար կշռի բարձրացումը։ Արտադրողական ուժերի զարգացման մակարդակով և տնտեսական կառուցվածքի բարդությամբ ու ավարտվածության աստիճանով Արարատյան տնտեսական շրջանը ավելի բարձր մակարդակի վրա է կանգնած, քան մյուսները։ Այստեղ է գտնվում մայրաքաղաք Երևանը, ուր կենտրոնացվել են հանրապետական և միութենական նշանակություն ունեցող արդյունաբերության առաջատար ճյուղերը (քիմիական արդյունաբերություն, մեքենաշինություն, շինանյութերի արտադրություն, թեթև և սննդի արդյունաբերության բազմաթիվ ձեռնարկություններ), հայ մշակույթի ու գիտության գլխավոր օջախները։ Արարատյան տնտեսական շրջանը տալիս է հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի մոտավորապես $^2/_3$-ը։

Վերջին մարդահամարի տվյալներով Հայաստանի քաղաքային բնակչության գրեթե $^2/_3$-ը ապրում է Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում, $^1/_3$-ը՝ մնացած 47 քաղաքներում և քաղաքատիպ ավաններում։

Երկրի աշխատանքային ռեսուրսների, այսինքն՝ աշխատունակ բնակչության պլանաչափ բաշխումն ու ճիշտ օգտագործումը ժողովրդական տնտեսության ճյուղերում եղել և մնում է սովետական իշխանության տնտեսական քաղաքականության հիմնական պրոբլեմներից մեկը։ 1959 թ. Սովետական Հայաստանի բնակչության 52 տոկոսը (921052 մարդ) աշխատունակ բնակիչներն էին, որոնք բաշխված էին հետևյալ կերպ՝ հանրային արտադրության մեջ զբաղված էր նրանց 70,8 տոկոսը, սովորողներ էին 5,7 տոկոսը, կենսաթոշակառուներ և թոշակառուներ՝ 2,9 տոկոսը, իսկ 20,6 տոկոսը կազմում էին անձնական-օժանդակ և տնային տնտեսությամբ զբաղվողները, որոնց հիմնական մասը (շուրջ 70 տոկոսը) կանայք էին[15]։ Վերջին տասնամյակում վոքր և միջին քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում թեթև աշխատանք պահանջող ձեռնարկությունների տեղադրումը հնարավորություն տվեց ավելի լավ օգտագործել նաև կանանց աշխատանքային ռեսուրսները։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում զբաղված բնակչության բաշխումը տնտեսության ճյուղերում։ 1960 թ. արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և կապի մեջ աշխատում էր զբաղված բնակչության (առանց սովորողների և զինծառայողների) 34 տոկոսը։ 1968 թ. նրանց թիվը հասավ 42 տոկոսի։ Գյուղատնտեսության մեջ աշխատում էր համապատասխանաբար՝ 44 և 29 տոկոսը։

Փոխվել է նյութական արտադրության և ոչ արտադրական ոլորտում աշխատողների հարաբերակցությունը։ 1960—1968 թթ. նյութական արտադրության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը 81,7 տոկոսից իջավ 76,1 տոկոսի, իսկ ոչ արտադրական ճյուղերում, ընդհակառակը, 18,3 տոկոսից բարձրացավ 23,9 տոկոսի[16]։ Այդ տենդենցը ընդհանրապես նկատելի է ողջ Սովետական Միության մեջ. այսպես, 1940 թ. նյութական արտադրության մեջ աշխատում

[15] «Итоги всесоюзной переписи населения 1959 г., Арм. ССР», էջ 32—33։
[16] «Народное хозяйство Арм. ССР в 1968 г.», էջ 145։

էր զբաղված բնակչության 88,3 տոկոսը, 1960 թ.՝ 83,0, 1968 թ.՝ 78,7 տոկոսը, ոչ արտադրական ճյուղերում՝ համապատասխանաբար՝ 11,7, 17,0 և 21,3 տոկոսը[17]։ Նյութական արտադրության մեջ զբաղվածների տեսակարար կշռի իջեցումը, ինչպես ցույց է տալիս սոցիալիստական շինարարության պրակտիկան, օրինաչափ երևույթ է, քանի որ նյութական բարիքների առատության ստեղծման հետ մեկտեղ, միաժամանակ հոգ է տարվում և ժողովրդի կոմունալ-կենցաղային, հոգևկան և էսթետիկական պահանջները բավարարելու, սովետական մարդու բազմակողմանի ներդաշնակ զարգացումն ապահովելու համար։ Գիտության, լուսավորության, արվեստի, առողջապահության բնագավառներում աշխատողների թվի աճը խթանում է ոչ արտադրական ճյուղերում զբաղվածների տեսակարար կշռի բարձրացումը։

Սովետական Հայաստանի բնակչության խտությունը 1970 թ. կազմում է 83 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա (ՍՍՀՄ-ում միջինը 10,8 մարդ է)։ Բնակչության խտությամբ Սովետական Հայաստանը զիջում է միայն Մոլդավական ՍՍՀ-ին և Ուկրաինական ՍՍՀ-ին։ Հանրապետության տերիտորիայի առանձին մասերում բնակչության խտությունը միատեսակ չէ։ Առավել խիտ է բնակեցված Արարատյան դաշտը. Արարատի, Արտաշատի, Մասիսի, Հոկտեմբերյանի և Էջմիածնի շրջաններում, միասին վերցրած, 1 քառ. կմ վրա միջին հաշվով ապրում է 105 մարդ, մինչդեռ Զանգեզուրում՝ 31 մարդ։ Ամենացածրադիր բնակավայրը հանրապետության հյուսիսային մասում գտնվող Հաղթանակ գյուղն է (Նոյեմբերյանի շրջան), որ գտնվում է 450 մ բարձրության վրա. ամենաբարձրադիրները՝ Վերին Շորժա գյուղը (Վարդենիսի շրջան, 2360 մ) և «Արագած» օդերևութաբանական կայանը (3227 մ)։ Հայաստանի բնակչության խիստ անհամաչափ տեղաբաշխումը, բացի վերևում նշված տնտեսական ֆակտորներից, զգալի չափով պայմանավորված է նաև տերիտորիայի բարձր լեռնային բնույթով և կտրտվածությամբ։ Մինչև 1000 մ բարձրություն ունեցող շրջաններում, որոնք կազմում են հանրապետության տերիտորիայի 1/10 մասը, ապրում է նրա ողջ բնակչության կեսից մի փոքր ավելին։

Ուսումնասիրությունները ենթադրել են տալիս, որ առաջիկա տարիներին Սովետական Հայաստանի բնակչության բնական աճի տեմպերը մասամբ կնվազեն, սակայն բնակչության թիվը 1975 թ. կկազմի 3,1—3,2 միլիոն մարդ, իսկ 2000 թ.՝ 4,3—4,5 միլիոն մարդ, այսինքն հանրապետության բնակչությունը կկրկնապատկվի։ Համապատասխանաբար կմեծանա և բնակչության խտությունը՝ 1 քառ. կմ վրա ապրողների միջին թիվը կհասնի 143—150 մարդու, 1926 թ. 26 մարդու դիմաց։ Միաժամանակ կփոխվի քաղաքային և գյուղական բնակչության կառուցվածքը՝ կմեծանա առաջինի տեսակարար կշիռը։ Տեղաշարժեր կկատարվեն բնակչության հասակային կառուցվածքի մեջ՝ կմեծանա աշխատանքի հասակ ունեցողների տեսակարար կշիռը, կերկարի մարդկանց կյանքի միջին տևողությունը, որը սովետական կարգերի առավելության լավագույն ցուցանիշներից մեկն է։

17 «Народное хозяйство СССР в 1968 г.», М., 1969, էջ 546։